— Այս թղթերի վրայ, — ասաց նա, — նկարուած են Վանայ նահանգի բոլոր գիւղերը, լեռները, գետերը, դաշտերը, մի խօսքով, ինչ որ ստեղծել են բնութիւնը եւ մարդիկ:

— Ցոյց տուր մի գիւղ, — ասեցի նրան:

Նա ցոյց տուեց փոքրիկ օ-ի պէս մի բան, որի մօտ խազած էր նոյնպէս փոքրիկ մի խաչ:

— Դա, — ասաց, — սուրբ Տիրամօր գիւղն է, որտեղ դու ուխտ էիր գնացել: Իսկ այն խաչը վանքն է:

— Այս ինչպէ՞ս գիւղ է, որտեղ ոչ մի մարդ չէ երեւում, — հարցրի ես:

Նա ծիծաղեց եւ ոչինչ չպատասխանեց:

— Դրանք է՞լ դու ես նկարել, — հարցրի ես:

Նա գլխով շարժեց, թէ այո՛:

Բայց ի՞նչ բանի պէտք են դրանք:

— Բժիշկն երբ որ կամենում է բժշկել մի մարդու հիւանդութիւնը, նախ եւ առաջ պէտք է ծանօթանայ նրա մարմնի կազմուածքի հետ, — պատասխանեց նա: — Եւ մենք, եթէ կամենում ենք մեր հայրենիքին որեւիցէ օգուտ մատուցանել, նախ եւ առաջ պէտք է ճանաչենք նրան:

Մեր ձիերը վրանի առջեւ կանգնած էին. ինձ համար պատրաստել էր տուել բէկը մինը իր ձիերից: Ես յայտնեցի նրան, թէ ինչ պայմանով էի ընդունել ինձ ընծայած ձին հայ վրանաբնակների գլխաւորից, եւ աւելացրի, թէ ես այժմ իրաւունք ունէի նրա տուած պարգեւը ինձ հետ տանել, որովհետեւ իմը չգտնուեցաւ: Ուրեմն բէկին պէտք չէր իր ձիերից մէկը անհանգիստ անել:

— Ձեր ձին գտնուածի հաշուումն է, որովհետեւ նրա փոխարէն մենք ունենք տասը հատ, — ասաց բէկը ծանր կերպով: — Բայց հայ վրանաբնակների գլխաւորի քեզ ընծայած ձին ես վաղուց արդէն դարձրել եմ իր տիրոջը:

Ես ստիպուեցայ ընդունել բէկի պարգեւը, որի վրայ աւելացրուց նա մի զոյգ ատրճանակ, ասելով.

— Այս ատրճանակները նոյնպէս ընդունեցէք իմ կողմից որպէս ընծայ, դրանք Բախչիսարայի ընտիր գործ են: Երբ որ կը յաջողի ձեզ դրանցով սպանել ձեր թշնամիներից մէկին, միշտ յիշեցէք եզիդիների բէկին:

Ասլանը մինչ այն աստիճան ընտանեցած էր բէկի գերդաստանի հետ, որ մինչեւ անգամ մտաւ կանանոցը եւ ամէնի հետ մնաք բարեաւ ասաց: Բոլորը շատ սիրով մեզ ճանապարհ դրին, միայն մի հոգի դժգոհ էր. դա էր գեղեցիկ Թուրթին, որ վրանի ետեւում մենակ կանգնած, լաց էր լինում...